**ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 4**
**«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-1/7» ԾԱԾԿԱԳՐՈՎ**
**ԳՆԱՆՇՄԱՆ ՀԱՐՑՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ**

ք. Երևան

22.08.2017թ.
ժամը $11^{00}$

Մասնակիցներում էին՝

**Հանձնաժողովի նախագահ, գնահատման աշխատակազմի պատասխանատու՝**

- ՀՀ ՊՆ ՆՏԱ դեպարտամենտի ՏԱ վարչության պետ, գնդապետ Հ. Կարապետյան,

**Գնահատողներ՝**

- ՀՀ ՊՆ ՆՏԱԴ ՏԱ վարչության ՀՕՊ, ՌԵՊ, ԿԱՊ-ի և ավիացիոն միջոցներով ապահովման բաժնի առաջատար մասնագետ Ռ. Ձադոյան,
-ՀՀ ԶՈՒ կապի և ԱԿՀ վարչության ՏԱ բաժնի պետի տեղակալ, փոխգնդապետ Խ. Երիցյան,
-ՀՀ ՊՆ ՌՈ ՀՕԾ բաժնի ավագ սպա, մայոր Հ. Բարսեղյան,
ՀՀ ՊՆ իրավաբանական վարչության իրավական ապահովման բաժնի սպա, մայոր Կ. Բրուտյան:

**Գնումները համակարգող՝**

ՀՀ ՊՆ ՆՏԱ դեպարտամենտի գնումների փաստաթղթերի ձևակերպման վարչության սպառազինության և ռազմական տեխնիկայի բաժնի պետի տեղակալ, ՔՀԾ 2-րդ դասի խորհրդական Ա. Բաղրամյան:

**«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-1/7» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին.**

---

(Ա. Բաղրամյան)

1. Մասնակցի՝ գնանշման հարցման ընթացակարգի հրավերով պահանջվող(նախատեսված) որակավորման պահանջներին իր համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերի առկայության և դրանց գնանշման հարցման ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին համապատասխանության և ընտրված մասնակիցներին հայտարարելու մասին.

2. Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

**Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0:**

**1. Մասնակցի՝ ԳՀ ընթացակարգի հրավերով պահանջվող(նախատեսված) որակավորման պահանջներին իր համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերի առկայության և դրանց գնանշման հարցման ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին համապատասխանության և ընտրված մասնակիցներին հայտարարելու մասին.**

---

(Ա. Բաղրամյան)

1.1 **«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-1/7»** ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերով պահանջվող որակավորման պահանջներին «Էյչ գրուպ» ՍՊԸ-ի համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերում առկա են անհամապատասխանություններ՝ մասավորապես Մասնակցի կողմից ներկայացված հայտում բացակայում է հավելված N 6.1-ը՝ առաջին տեղ զբաղեցրած մասնակցի կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը: Հաշվի առնելով վերոգրյալը գնիատող հանձնաժողովը 25.08.2017թ. նիստը մեկ օրով կասեցրել է և մասնակցին առաջարկել շտկել անհամապատասխանությունը:

Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի՝ ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 44-րդ կետով նախատեսված համապատասխան եզրակացության համաձայն մասնակիցը Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորություններ չունի:

**Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5 դեմ՝ 0:**

**29.08.2017թ-ին գնահատող հանձնաժողովը շարունակեց աշխատանքները՝** սահմանված ժամկետում «Էյչ **Գրուպ»** ՍՊԸ-ի կողմից ներկայացվել է մասնակիցների համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերի շտկված տարբերակները, որոնք ընդունվել են գնահատող հանձնաժողովի կողմից:

1.2 Հիմք ընդունելով հանձնաժողովի անդամների կողմից ներկայացված գնահատման թերթիկները՝ հանձնաժողովը որոշեց «Էյչ **Գրուպ»** ՍՊԸ-ի որակավորման հատկանիշները գնահատել համապատասխան **«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-1/7»** ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերի պահանջներին և վերջինիս հայտարարել ընտրված

/հաղթող/ մասնակից և անգործության ժամկետի ավարտից հետո վերջինիս պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնել:

1.3 Հանձնաժողովը որոշեց հաստատել **«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-1/7»** ծածկագրով ընթացակարգի արդյունքում պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը և հրապարակել՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն:

**Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5 դեմ՝ 0:**

**2. Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.**

---

(Ա. Բաղրամյան)

«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-1/7» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի արդյունքների ամփոփման նպատակով հանձնաժողովի նիստը հրավիրել գնման պայմանագրերի կնքվելու, իսկ չկնքվելու դեպքում այդ հանգամանքը հայտնի դառնալու օրվան հաջորդող օրացուցային օրը ժամը $11^{00}$-ին, ՀՀ ՊՆ նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի ԳՓՁ վարչության նիստերի դահլիճում:

**Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0:**

| | |
|---|---|
| Գնահատող, (ԳԱՊ) | Հ. Կարապետյան |
| Գնահատող, | Ռ. Չադոյան |
| Գնահատող | Խ. Երիցյան |
| Գնահատող | Հ. Բարսեղյան |
| Գնահատող | Կ. Բրուտյան |
| Գնումները համակարգող՝ | Ա. Բաղրամյան |